

*Էդգար Հելլեյան*

Չ Ա Վ Ա Խ Զ Ի

Խ Ն Դ Ի Բ Ը

ԵՐԵՎԱՆ – 2006թ.

## Պատմա-քաղաքական խնդիրները Ջավախքում

1918թ. մայիսյան դեպքերից հետո, երբ հաջորդաբար իրենց անկախությունը հռչակեցին Վրաստանը, Հայաստանը եւ Ադրբեջանը՝ հայտարարելով Անդրֆեդերացիայի ինքնալուծարման մասին, ապա երբ 1918թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիան ռազմական լուծարման ենթարկվեց (այլ կերպ՝ գրեթե ոչնչացվեց) Անտանտի կողմից եւ ստիպված եղավ իր զորքերը դուրս բերել Այսրկովկասից, Ախալքալաքի եւ Բորչալուի գավառների պատկանելության խնդիրը սրեց հայ-վրացական հարաբերությունները: 1918թ. մայիսի 21-ին ՀՀ խորհրդարանը ընդունեց, հետո 8 օր անց ձայների 19 կողմ, 8 դեմ, եւ 6 ձեռնպահ հարաբերակցությամբ պնդեց «Ախալքալաքի գավառը Հայաստանի անբաժան մաս համարելու» մասին որոշումը:

1918թ. դեկտեմբերի 1-ին ՀՀ կառավարությունը ՀՀ զինվորական նախարարությանը հրահանգեց առայժմ զերծ մնալ ռազմական գործողություններից եւ կատարել նախապատրաստական աշխատանքներ: Դեկտեմբերի 5-ին ՀՀ արտգործնախարարությունը Վրաստանին առաջարկեց շարունակել բանակցությունները, սակայն Վրաստանը, օգտվելով ՀՀ համար ստեղծված միջազգային ծանր իրավիճակից, թուրքական զորքերի՝ Ախալքալաքից հեռանալուց անմիջապես հետո զորքեր մըտցրեց եւ 1918թ. դեկտեմբերի 5-ին զավթեց Ախալքալաքի գավառը եւ Լոռու գավառի մի մասը՝ հայտարարելով, որ Ախալքալաքի նվաճումը քննարկման ենթակա չէ:

Հասկանալով, որ հարցը խաղաղ ճանապարհով լուծելու իրենց ցանկությունն ապարդյուն է, ՀՀ կառավարությունը հրահանգեց ռազմական նախարարության կազմում գտնվող Լոռու զորամասի հրամանատար Դրոյին՝ մաքրել Լոռին վրացիներից:

1918թ. դեկտեմբերի 13-ին բռնկվեց հայ-վրացական պատերազմը, իսկ հաջորդ օրն արդեն Դրոյի զորամասը շարժվեց առաջ՝ Վորոնցովկա-Այրում գծով: Նույն օրը գնդապետ Տեր-Նիկողոսյանի զորամասը գրավեց Վորոնցովկան, Պրիվոլնոյեն եւ Միխայլովկան: Գնդապետ Նեստերովսկին ազատագրեց Սանահին կայարանը: Առաջավոր դիրքեր գրավեցին նաեւ ռոտմիստր Փիրունյանի եւ փոխգնդապետ Կորոլկովի զորամասերը: Դեկտեմբերի 15-16-ին հայկական զորքերի ճնշման ներքո վրացական զորքերը թողեցին Ալավերդին եւ Այրումը, իսկ 17-ին Ախթալա կայարանի մոտ հայկական ուժերը գրավեցին վրացական բանակի հրամանատար՝ գեներալ Ծուլուկիձեի պատկանող շտաբ վազոնը, իսկ Ծուլուկիձեն հազիվ ճողոպրեց: Դեկտեմբերի 18-ին Կորոլկովի ջոկատը մոտեցավ Սադախլոյին, իսկ Տեր-Նիկողոսյանի ուժերն ազատագրեցին Բուլնիս-Խաչենը: Դեկտեմբերի 19-ին Տեր-Մարտիրոսյանի ջոկատը Սադախլոյի մոտ շրջափակվեց, եւ Տեր-Մարտիրոսյանը գերի ընկավ: Դեկտեմբերի 19-ին Ասլանյանի զորամասը ազատագրեց Սադախլուն՝ ոչնչացնելով Ծուլուկիձեի զորամասը: Դեկտեմբերի 28-ին պատերազմական գործողություններին միջամտեցին անգլիական եւ ֆրանսիական բանակները:

րի սպաներ Ռայկրոֆտը եւ Շարդիյնին. նրանց ճնշմամբ 1918թ. դեկտեմբերի 31-ին, ժամը 24.00-ին, կնքվեց հայ-վրացական հաշտության պայմանագիր: Այսպիսով, ավարտվեց հայ-վրացական «կարճատև պատերազմը»՝ ընդամենը 18 օր տևելով:

Պատերազմի ժամանակ հայկական 6.000-անոց զորքերի դեմ վրացական 12.000-անոց բանակ հանելուց զատ՝ վրացական կողմը կիրառեց մի շարք հակամարդկային գործողություններ, մասնավորապես. Վրաստանում բնակվող բոլոր հայերը Վրաստանի Հանրապետության օրենքով հայտարարվեցին ռազմագերիներ՝ տասնյակ հազարներով քվեելով Քութայիսի հանքավայրերը՝ տաժանակրոթյամ: Վրացահայությունը զանգվածաբար ենթարկվեց թալանի, սպանությունների և ձերբակալությունների՝ առանց տարիքային կամ սեռական խտրականության: Թիֆլիսում փակվեցին հայկական բոլոր՝ դիվանագիտական, հասարակական կազմակերպությունները, կասեցվեց հայկական մամուլի գործունեությունը: Ձերբակալվեցին եւ կտտանքների ենթարկվեցին Թիֆլիսի Դումայի հայ պատգամավորները, Վրաստանը շրջափակման ենթարկեց Հայաստանի Հանրապետությանը՝ սովի ճիրաններում գըտնվող ավելի քան 600 հազար գաղթականների դատապարտելով մահվան:

1918թ. հունվարի կեսերին Թիֆլիսում բացվեց հայ-վրացական հաշտության խորհուրդը, որն էլ հունվարի 17-ին ստորագրեց հաշտության պայմանագիր: Ըստ այդմ.

1. Լոռին հայտարարվեց չեզոք գոտի՝ Սադախլոյից մինչեւ Դսեղ:
2. Չեզոք գոտում հայկական եւ վրացական կողմերն իրավունք ունեին 660-ական զինվոր պահել: Բացի այդ Վրաստանն իրավունք էր ստանում եւս 250 զինվոր պահել Ախալքալաքում:
3. Հունվարի 20-ին պետք է տեղի ունենար ռազմագերիների փոխանակումը, իսկ արդեն մինչեւ հունվարի 21-ը կողմերը պիտի ամբողջովին զինաթափվեին:

Ստացվում է, լինելով հաղթանակած պետություն, ՀՀ-ն, ենթարկվելով միջազգային ճնշումների, ստորագրեց պարտվողական պայմանագիր, որից հետո 1919թ. մարտի 8-ին Վրաստանը ճանաչեց Հայաստանի, իսկ մարտի 24-ին Հայաստանը՝ Վրաստանի անկախությունը: Հայ-վրացական հարաբերությունները ժամանակավորապես կարգավորվեցին եւ մտան խաղաղ զարգացման փուլ: Սակայն այս ժամանակավոր դադարը երկար չարունակվել էր կարող...

Ախալքալաքի գավառի եւ Բորչալուի գավառի որոշ շրջանների խընդիրը կրկին արժարծվեց 1919թ. Թիֆլիսում կայացած հայ-վրացական խորհրդաժողովում, որի ժամանակ քննարկվեց Ախալքալաքի գավառը Յեշտիս գյուղից հյուսիս՝ Վրաստանին, իսկ հարավ՝ Հայաստանին տալու մասին առաջարկը: Սակայն, պայմանավորված Ալավերդու հանքավայրերի հետ կապված՝ վրացական կողմի պահանջներով, նաեւ Վրաստանի ոչ կառուցողական քաղաքականությամբ, այս առաջարկը եւս իրավական լուծում չստացավ: 1920թ. ապրիլի 7-ին ձգտելով վիժեցնել հայ-վրացական ուժերի համախմբումը հակաադրբեջանական ճակա-

տում՝ Խորհրդային Ռուսաստանը Ադրբեջանի եւ Վրաստանի հետ կնքեց պայմանագիր, համաձայն որի վրացական տարածքներ ճանաչեց Ախալքալաքի եւ Բորչալուի գավառները՝ այդպիսով մեծացնելով իր քաղաքական ազդեցությունը Վրաստանում: Չորս օր հետո ՀՀ կառավարությունը ընդունեց հատուկ հայտարարություն՝ նշելով, որ Հայաստանի Հանրապետության համար անընդունելի է ՌՍՖՍՀ եւ ՎՀ միջև կնքված պայմանագրի՝ Ախալքալաքի եւ Բորչալուի գավառներին վերաբերող հատվածը:

1920թ. ապրիլի 28-ին խորհրդայնացվեց Վրաստանը, իսկ դեկտեմբերի 2-ին թրքա-բոլշեւիզմի ճնշմամբ խորհրդայնացվեց նաեւ Հայաստանը, որի կազմում ընդգրկվեցին Երեւանի նահանգը, Կարսի մարզի մի մասը, Ղազախի գավառի մի մասը, Ջանգեզուրի գավառը եւ Թիֆլիսի նահանգի՝ 1920թ-ի սեպտեմբերի 28-ի դրությամբ ՀՀ կազմում գտնված շրջանները: Լոռու եւ Ախալքալաքի գավառները Խորհրդային Հայաստանի կազմում չընդգրկվեցին: Այս գավառների հարցը քննարկվեց հուլիսի 2-7-ը Թիֆլիսում՝ ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումում, որը ձայների 6 կողմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ որոշեց Լոռու չեզոք գոտին վերամիավորել ՀԽՍՀ-ին, իսկ Ախալքալաքի եւ Ծալկայի շրջանները ՀԽՍՀ-ին վերամիավորելու հարցը տեղափոխեց Վրաստանի ԿԿ կենտկոմ՝ քննարկելու եւ եզրակացություն ստանալու համար: ՎԽՍՀ կոմկուսը 1921թ. հուլիսի 16-ին մերժեց այս առաջարկը: Հուլիսի 17-ին ՀԽՍՀ կառավարությունը կրկին բարձրաձայնեց Ախալքալաքի եւ Բորչալուի գավառի մի մասը ՀԽՍՀ-ին վերամիավորելու հարցը, բայց ի վերջո ՀԽՍՀ-ն ստիպված եղավ 1921թ. նոյեմբերի 6-ին Թիֆլիսում կնքել հայ-վրացական պայմանագիր, որով նշված գավառները մնացին ՎԽՍՀ կազմում:

1922թ. ստեղծվեց ԽՍՀՄ-ը: 1921թ. հուլիսի 16-ին ՎԽՍՀ կազմում ստեղծվեցին Աջարական, իսկ դեկտեմբերի 16-ին՝ Աբխազական ինքնավար հանրապետությունները, մինչ այդ 1921թ. ապրիլի 20-ին Վրացական ԽՍՀ կազմում ձեւավորվել էր նաեւ Հարավ-Օսական ինքնավար մարզը: Ախալքալաքի եւ Բորչալուի գավառների քաղաքական կարգավիճակը փոփոխություն չկրեց: Նշյալ գավառների քաղաքական կարգավիճակը փոփոխության չենթարկվեց նաեւ ԽՍՀՄ 1924թ., 1936թ. եւ 1977թ. Սահմանադրություններով: 1929թ. ՀԽՍՀ-ն եւ ՎԽՍՀ-ն ընդունեցին իրենց առաջին Սահմանադրությունները, որոնցով վերոնշյալ տարածքներն ամրագրվեցին որպես ՎԽՍՀ տարածքներ: Ախալքալաքի եւ Բորչալուի գավառի որոշ հատվածներ Հայաստանին միավորելու հարցը կրկին բարձրացվեց 1936թ. ԽՍՀՄ երկրորդ Սահմանադրության ընդունման ժամանակ, սակայն այս անգամ եւս վրացի «կոմունիստ ընկերների»՝ մասնավորապես Բերիայի ջանքերով, անարդյունք մնաց:

1924-1953թթ. ստալինյան բռնապետության պայմաններում վերագրյալ տարածքների խնդիրը, որպես Հայկական Հարցի բաղկացուցիչ մաս, բացարձակապես լուրջյան մատնվեց: Խորհրդային ամբողջ ժամանակաշրջանում Ախալքալաքի եւ Բորչալուի գավառները Հայաստանին վերադարձնելը, զանգվածային ահաբեկումների եւ բռնաճնշումների

պայմաններում բացարձակ լռության մատնվեց՝ քաղաքական հարցից հետզհետե վերածվելով սոցիալ-տնտեսական գործոնի: Այս միտումը որոշակիորեն սկսվեց փոխվել եւ ազգային-քաղաքական դրսեւորում ըստանալ ԽՍՀՄ փլուզումից եւ Վրաստանում Գամսախուրդիայի իշխանության գալուց հետո:

Գալով իշխանության՝ Ջվիադ Գամսախուրդիան սկսեց վարել ազգային խտրականության քաղաքականություն: Շրջանառվեց «21 կիլոմետրանոց գոտի» հասկացությունը, որում ներառվեցին նաեւ Վրաստանի հայաբնակ շրջանները. այս տարածքներում արգելվեց հողի առուվաճառքը եւ մասնավորեցումը: Ախալքալաքում եւ մյուս հայաշատ քաղաքներում ու շրջաններում հայերին ազգային միատարրությունից զրկելու, ինչպես նաեւ արհեստականորեն ժողովրդագրական պատկերն ի վնաս հայերի փոխելու, ինչպես եւ Ախալքալաքի ու Բոգդանովկայի շրջանները վարչական ինքնուրույնությունից զրկելու համար վրացական իշխանությունները Ախալքալաքի, Ախալցխայի, Բոգդանովկայի, Ասպինձայի եւ Ադիգենեյի շրջանները միավորեցին իբրեւ մեկ վարչական նահանգ՝ Ախալցխա կենտրոնով: Ինչի շնորհիվ, մասամբ նաեւ պայմանավորված վարչական մարմինների՝ Ախալքալաքից ավելի քիչ հայերով բնակեցված Ախալցխա տեղափոխմամբ, վարչական մարմիններում հայերի կշիռը սկսեց նվազել:

1918-1920-ական թթ. Ջավախքը հայաթափելու վրացական քաղաքականությունը եական արդյունք չտվեց: Բայց ահա, Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ իշխանության եկան գամսախուրդիականները եւ, առավել եւս, Սահակաշվիլու վարչակազմի հաստատումից հետո, երբ ԱՄՆ-ն սկսեց ընդարձակվել Այսրկովկասում (ռուսական ազդեցության թուլացման հաշվին), «Ժողովրդավարության կղզյակ Վրաստանը բնականաբար պիտի օգտվեր «Ժողովրդավարության հայր» ԱՄՆ-ի աջակցությունից եւ փորձեր վերականգնել իր մտացածին տարածքային ամբողջականությունը եւ դերը տարածաշրջանում: Սակայն հաշվի առնելով, որ այս ծրագրի իրականացման համար Վրաստանը առաջմ իրական ուժեր չունի, վրացական իշխանությունները այս ամենը իրագործում են քարոզչությամբ՝ փորձելով երկրում ձախողումների ու դժվարությունների պատճառ ներկայացնել ազգային փոքրամասնությունների, մասնավորապես, հայերի՝ իբր թե անջատողական տրամադրությունները:

Եվ այսպիսով, Ջավախքի հայաթափման քաղաքականությունը (որը Վրաստանի համար կարելու է ոչ միայն Վրաստանի մտացածին տարածքային ամբողջականության տեսանկյունից, այլեւ իր ռազմավարական դաշնակիցներ Թուրքիայի եւ Ադրբեջանի պահանջները կատարելու եւ վերջապես Հայաստանին դեպի նավահանգիստներ՝ ըստ այդմ էլ դեպի Ռուսաստան եւ Եվրոպա հաղորդակցության ուղիներից զրկելու համար) նոր թափ ստացավ խորհրդային իշխանության տապալումից հետո: Տնտեսական ծանր վիճակում գտնվող երկրամասը հայտնվեց սոցիալ-տնտեսական աղետի առջեւ. 1989թ. մինչեւ վերջին տարիները շրջանը զրկված էր տրանսպորտային հաղորդակցության ուղիներից,

էլեկտրաէներգիայի մատակարարում գրեթէ չէր կատարվում, կրթական, մշակութային, առողջապահական ոլորտները ոչնչացման եզրին էին: Այս պայմաններում պետական աջակցության բացակայությունը հանգեցրեց զանգվածային արտագաղթի՝ հիմնականում դեպի Ռուսաստան եւ Արեւելյան Եվրոպա: Նախագահ Շեւարդնաձեի կառավարման շրջանում ըսկսեց կիրառվել «բաժանիր, որ տիրես» սկզբունքը. պետական մարմինների թողտվությամբ եւ աջակցությամբ հրահրվեցին ազգամիջյան բախումներ ազգային փոքրամասնությունների, հատկապես, հայերի եւ սլովանների միջեւ:

Այս քաղաքականությունն ամրագրվեց նաեւ նախագահ Սահակաշվիլու ձեռագրով: Չնայած այս ամենին Ջավախքում վերջին տարիներին սկսեց աշխուժանալ հասարակական-քաղաքական կյանքը՝ հանգեցնելով Ջավախքի խնդրի նկատմամբ միջազգային հետաքրքրություն առաջացնելուն, եւ այն Ջավախք-Վրաստան հարթությունից դեպի միջազգային քաղաքական հարթակներ տեղափոխելու իրական հնարավորություններ տվեց: Ստեղծվեցին մի շարք հասարակական կազմակերպություններ՝ «Մենք ենք, մեր Ջավախքը», «Ջավախք երիտասարդական մարզամշակութային միությունը» եւ այլն: Որոշակի քայլեր իրականացվեցին հատկապես 2005թ.՝ Ջավախքում հասարակական հոսանքների միավորման եւ միասնական հասարակական ճակատ ստեղծելու ուղղությամբ: 2005թ. Ջավախքի հասարակական կազմակերպությունների ղեկավարները համատեղ հանդես եկան ինքնավարության պահանջով, որին հետեւեց հայերի նկատմամբ իրականացվող կադրային ջարդը՝ դատաիրավական, մաքսային եւ մյուս ոլորտներում: Շրջանի կենտրոն Ախալքալաքում, հետո 2005թ ղեկտեմբերի սկզբներին Բավրայի անցակետի մոտ տեղի ունեցան բախումներ հայ ցուցարարների եւ Վրաստանի ուժային կառույցների միջեւ: Սա Ջավախքի նկատմամբ հետաքրքրության ալիք բարձրացրեց Հայաստանում: Մի շարք հասարակական-քաղաքական, ռազմական գործիչներ, երիտասարդական կազմակերպություններ բողոքեցին՝ որոշ դեպքերում հանդես գալով շատ կոշտ հայտարարություններով: Այս ամենը, սակայն, չստացավ պետական աջակցություն: Հայաստանի Հանրապետությունը շահագրգռված լինելով հայկրացական հարաբերությունների բնականոն զարգացմամբ եւ հարցը միջազգային չափանիշներին համապատասխան՝ խաղաղ ճանապարհով լուծելու ձգտմամբ՝ փորձում է պահպանել հավասարակշռություն: Օգտվելով սրանից, ինչպես նաեւ գիտակցելով, որ Արեւմուտքի հետաքրքրությունները այս տարածաշրջանում զուտ շահադիտական են եւ Արեւմուտքին հուզում է միայն նավթային, գազային եւ տրանսպորտային ենթակառուցվածքների անխափան աշխատանքը (ինչն, ի դեպ, բխում է նաեւ Վրաստանի եւ նրա ռազմավարական գործընկերներ թուրքիայի, Ադրբեջանի շահերից), վրացական իշխանությունները շարունակում են պետականորեն մշակված հայաթափման քաղաքականություն իրականացնել: Ջավախքի հայաթափման դեպքում, ինչը նշանակում է Ջավախքի թրքացում, Հայաստանը կհայտնվի թուրքական բացարձակ շրջափակման մեջ. նկատի ունենանք այն հանգամանքը, որ ՀՀ սահմանակից

ԻԻՅ տարածքները եւս բնակեցված են թրքական տարրերով: Այդպիսով՝ Թուրքիան Կասպից ծովից Սև ծով ձգվող բոլոր հաղորդակցության ուղիների եւ նավթային ու գազային ենթակառուցվածքների վերահսկողը կդառնա: Վրաստանը կկորցնի Աբխազիան, Օսիան, Սվանիան, հարավում՝ Աջարիան եւ Մեսխեթ-Ջավախեթին: Հայաստանը գործնականում կզրկվի դեպի Եվրոպա եւ Ռուսաստան տանող ճանապարհներից, կըկորցնի իր դիրքերը ոչ միայն տարածաշրջանում, այլեւ ամբողջ աշխարհում՝ վերածվելով երկրի, որի գոյությանը հաշտվում են (իսկ գուցե եւ ոչ), բայց հետը հաշվի չեն նստում:

### **Ազգային-ժողովրդագրական խնդիրը Ջավախքում**

Անդրադառնալով հայ-վրացական հարաբերություններում առկա մի շարք խնդիրներին եւ, գլխավորապես, Ջավախքի հայատարհանմանը, ինչպես նաեւ Խորհրդային Վրաստանի եւ Վրաստանի 3-րդ հանրապետության ժամանակաշրջաններում Ախալքալաքի գավառում եւ Բորչալուի գավառի հայաբնակ շրջաններում բնակչության ժողովրդագրական կազմը ի վնաս հայերի փոխելու վրացական իշխանությունների քաղաքականությունն ապացուցելու համար, կարելու է համարում ներկայացնել քննարկվող ժամանակաշրջանում Ջավախքի ազգային-ժողովրդագրական շարժը: Եվ այսպես, 1918թ. Ախալքալաքի գավառն ուներ 111 գյուղ, որից՝ 64-ը հայկական.

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| 1. Աբուլ-935 բնակիչ | 25. Մերենիա-1280     |
| 2. Արագվա-1858      | 26. Մեծ Սամաստ-657   |
| 3. Կարտիկամ-1391    | 27. Փոքր Սամաստ-718  |
| 4. Կուլիկամ-1075    | 28. Սիրիկվա-187      |
| 5. Մաջադիա-1010     | 29. Տուրցխ-978       |
| 6. Բավրա-1380       | 30. Խանդո-2252       |
| 7. Օլավերդ-1305     | 31. Գյումբուրյա-1762 |
| 8. Բզավեթ-680       | 32. Դիլիսկա-2778     |
| 9. Օրջա-1617        | 33. Չանդուրա-1400    |
| 10. Մեծ Խոսպիա-473  | 34. Վաշխան-2643      |
| 11. Կորխ-995        | 35. Դադել-1805       |
| 12. Խուլուզամա-778  | 36. Դիլիֆ-1144       |
| 13. Ազանա-557       | 37. Գոնդուրա-1435    |
| 14. Ալաթունան-553   | 38. Դուլալիս-308     |
| 15. Բալանթա-278     | 39. Մեծ Գոնդուրա-695 |
| 16. Բալխո-600       | 40. Մանգարա-1000     |
| 17. Բեժանո-1654     | 41. Մուրճախեթ-181    |
| 18. Բուղաշեն-548    | 42. Սուլդա-2755      |
| 19. Բուռնաշեթ-597   | 43. Փոքր Խանչալի-505 |
| 20. Հադո-655        | 44. Մեծ Խանչալի-1972 |
| 21. Գոմակ-1548      | 45. Կարծախ-3813      |
| 22. Հակ-580         | 46. Մրակոլ-507       |
| 23. Էխտիլա-700      | 47. Մեծ Արագյալ-925  |

- 24. Կաճո-420
- 49. Գանձա-2450
- 50. Գաջալար-945
- 51. Սաթխա-3400
- 52. Խոջաբեզ-882
- 53. Ջիզրաշեն-1817
- 54. Ղաուրմա-502
- 55. Թախչա-492
- 56. Թորխա-650
- 57. Տրկնա-359

- 48. Փորք Արագյալ-425
- 58. Չխատուլա-317
- 59. Ազավրեթ-1431
- 60. Ալաստան-2235
- 61. Վարնան-1123
- 62. Խորենիս-613
- 63. Ոչնանա-635
- 64. Դեշտիա-2610
- Ընդհանուր առմամբ՝  
87085 բնակիչ

Ախալքալաք քաղաքն ուներ 4303 բնակիչ, որի 95%-ը կան 4084-ը հայեր էին:

Բորչալուի գավառը, որի կազմում էին Բորչալուի, Բուլնիսի եւ Ծալկայի շրջանները, ուներ 155900 բնակիչ, որից 63148-ը կան 40,5%-ը՝ հայեր: Այսպիսով, 1918թ. Ախալքալաքի եւ Բորչալու գավառի՝ Ծալկայի, Բուլնիսի, Բորչալուի շրջաններում ապրում էին 150233 հայեր՝ չհաշված հայ-վրացական, հունահայերի գյուղերում եւ ազգային այլ կազմ ունեցող գյուղերում եւ շրջաններում ապրող հայ բնակչությանը:

Խորհրդային տարիներին Վրաստանի իշխանությունների վարած ազգային գտնան քաղաքականության հետեւանքով մեծ չափերի հասավ Ջավախքի հայ բնակչության արտագաղթը դեպի ԽՍՀՄ այլ վայրեր՝ մասնավորապես դեպի ՂԽՍՀ եւ հյուսիսային Կովկաս: Այդպիսով, 20 տարվա ընթացքում Ախալքալաքի եւ Բորչալուի գավառների կամ, ինչպես ընդունված է ասել ներկայումս, Սամցխե-Ջավախեթիայի հայ բնակչությունը կրճատվեց գրեթե 1/3 մասով՝ 1939թ. կազմելով 100594 բնակիչ՝ 1918թ. ավելի քան 150 հազարի փոխարեն: 1939թ. դրությամբ վերոնշյալ տարածքում հայերն ապրում էին հետեւյալ համամասնությամբ՝

- Ախալցխա-16454,
- Ախալքալաք-54081,
- Ադիգեն-942,
- Ասպինձա-1741,

Բոզդանովկա-27376 հայ բնակիչ՝ կազմելով ընդհանուր բնակչության 44%-ը:

1944թ. հուլիսի 15-18-ը, հաշվի առնելով թուրք-մեխիերի հակումները դեպի Թուրքիա եւ խորհրդաթուրքական սահմանախախտումները, ԽՍՀՄ կառավարությունը Ասպինձայի, Ախալցխայի, Ադիգենի, Ախալքալաքի, Բոզդանովկայի շրջաններից դեպի միջնասիական ԽՍՀ-ներ արտերեց մոտավորապես 67 հազար եկվոր թուրք-մեխիերի: Միաժամանակ, վրացական կառավարությունը սկսեց իրականացնել լքված բնակավայրերը Վրաստանի տարբեր վայրերից եկած վրացիներով բնակեցնելու քաղաքականություն՝ նպատակ հետապնդելով արհեստականորեն նվազեցնել տեղի բնիկ հայ բնակչության թվական գերակշռությունը շրջանում: Վրացական կառավարության այս քաղաքականությունը որոշակի արդյունք տվեց: Եվ ահա 1939թ. մարդահամարի տվյալների համաձայն, եթե նշված տարածքներում վրացիները շատ փոքրաթիվ էին, ապա



1959թ. մարդահամարի տվյալներով արդեն վրացիները նշված տարածքներում կազմում էին բնակչության մեկ երրորդը՝ թվաքանակով զիջելով միայն հայերին: 1959թ. քննարկվող տարածքներում բնակչությունը տեղաբաշխված էր հետևյալ համամասնությամբ:

Շրջանը	Հայեր	Վրացիներ	Այլ ազգեր
Ախալցխա	25753	18857	5799
Ախալքալաք	57209	3566	2202
Ադիգեն	1627	16187	1784
Ասպինձա	2068	9081	116
Բոգդանովկա	27090	50	2201
Ընդհանուր	113747	47741	12102

Ընդ որում, այս ամբողջ ժամանակահատվածում Ջավախքի հայ բնակչությունը, չնայած ծնելիության բարձր մակարդակին, թվակազմի աճ գրեթե չի տվել՝ 20 տարվա ընթացքում ավելանալով ընդամենը 3128 հոգով: Եվ չնայած այս ամենին, բնիկ հայ բնակչությունը ինչպես 1939թ., այնպես էլ 1959թ. մարդահամարի տվյալներով մեծամասնություն էր՝ ընդհանուր բնակչության 64,5%-ը:

1960-70-ական թվականներին մեծ չափերի հասավ Ջավախքի հայ բնակչության զանգվածային արտագաղթը, միաժամանակ շարունակվում էր շրջանը վրացիներով բնակեցնելու քաղաքականությունը: Այստեղից էլ 1970-ական թվականներին սկսեց նկատվել վրացիների թվի աստիճանական աճ, որը հաստատապես բնակչության բնական աճի հետեւանք չէր: Վրացական բնակչության այս «աճը» մասամբ պայմանավորված էր նաեւ մարդահամարի տվյալների՝ ի օգուտ վրացիների կեղծմամբ: Այսպիսով, 1979թ. մարդահամարի տվյալներով Սամցխե-Ջավախքի վարչական շրջաններում բնակչությունն ուներ հետևյալ կազմը՝

ՇՐՋԱՆ	ՀԱՅԵՐ	ՎՐԱՑԻՆԵՐ
Ախալքալաք	63892	2867
Ախալցխա	24036	21702
Ասպինձա	2686	9725
Ադիգեն	1213	17287
Բոգդանովկա	32331	370

Ինչպես արդեն նշել ենք, 1990-ական թվականների կեսերին Վրաստանի նախագահ Շեւարդնաձեի հրամանով ստեղծվեց վարչատարած-

քային Սամցխե-Ջավախեթիայի նահանգը, որը ներառեց Ախալցխայի, Ախալքալաքի, Ասպինձայի, Ադիգենի, Բորժոմի, Ծալկայի եւ Բոզդանովկայի շրջանները: Այս քայլը եւս միտված էր ազգայինժողովրդագրական պատկերը Ջավախքում հոգուտ վրացիների փոխելուն: Ջավախքի բնակիչների թվին Բորժոմի շրջանի 30 հազար վրացիների ավելացումը արհեստականորեն բարձրացրեց Ջավախքում վրացիների տեսակարար կշիռը: Չբավարարվելով սրանով՝ վրացական իշխանությունները կեղծեցին նաեւ 2002 թվականի մարդահամարի տվյալները՝ վրացիների քանակը չափազանցված ցույց տալով:

ՇՐՋԱՆԸ	ՀԱՅԵՐ	ՎՐԱՑԻՆԵՐ	ԱՅԼ ԱԶԳԵՐ
Ախալքալաք	7000	19800	20700
Ախալցխա	2300	10700	13100
Ասպինձա	57500	3200	61100
Ադիգեն	16900	28500	46100
Բորժոմ	3100	27300	32400
Բոզդանովկա	32900	500	34300
Ընդհանուր	119700	90000	207700

Միակ նպատակը մի կողմից հայերի տեսակարար կշռի նվազեցումն էր, մյուս կողմից Ջավախքը «զուտ վրացական էթնիկ տարրերով» բնակեցնելը: Ինչպես տեսանք, վրացական իշխանությունների քաղաքականության շնորհիվ Ջավախքում սկսեց նկատվել ժողովրդագրական պատկերի՝ ի վնաս հայերի փոփոխություն: Ստացվեց, որ 1918թ. ավելի քան 150 հազար գրեթե միատարր հայկական բնակչություն ունեցող Ջավախք աշխարհում՝ չնայած բնական աճի մեծ չափերին, արդեն 2002 թվականին հայերի թիվը նվազել էր՝ հասնելով 113 հազարի: Դրան հակառակ արհեստականորեն բարձրացվել էր վրացական տարրի թվային կշիռը՝ 1918թ. 40 հազարի փոխարեն հասցնելով 90 հազարի: Այսօր շրջանառվում է նաեւ 1944թ. արքայական թուրք-մեսխեթի վերաբնակեցման հարցը. ընդ որում, եթե նրանք արքայական հիմնականում ոչ հայաբնակ շրջաններից եւ նրանց երբեմնի բնակավայրերում այսօր ապրում են հիմնականում Վրաստանի ներքին շրջաններից բերված վրացիներ, ապա այժմ նախատեսվում է նրանց վերաբնակեցնել հիմնականում հայաբնակ շրջաններում, ինչը կհանգեցնի բնիկ հայկական տարրի տեսակարար կշռի անկման եւ ազգային բախումների թատերաբեմի կվերածի Ջավախքը: Փաստորեն, հայկական շրջանները թուրք-մեսխեթով վերաբնակեցնելով՝ Վրաստանը հասկանում է, որ ի վերջո այս երկու՝ գեներտիկորեն անհամատեղելի տարրերից մեկը կլքի Ջավախքը: Այսպիսով, Վրաստանը կկատարի եՄ առաջ ստանձնած իր պարտավորությունները եւ, միաժամանակ, Ջավախքը հայաթափելու համար կստեղծի եւս մեկ գործոն:



### Հոգևոր-մշակութային խնդիրները Ջավախքում

Քննարկվող նյութի առումով կարելու է նաեւ անդրադարձը Վրաստանում ազգային փոքրամասնությունների՝ առավելապես ջավախահայերի նկատմամբ կիրառվող հոգեւոր եւ կրթա-մշակութային քաղաքականությանը: Ներկայացնելով վերոնշյալ խնդիրը՝ հարկ է ընդգծել, որ մինչեւ Հայաստանի եւ Վրաստանի խորհրդայնացումը, ջավախահայությունը հոգեւոր առումով ենթարկվում էր Մայր աթոռ սուրբ Էջմիածնին եւ կառավարվում էր Հայ Առաքելական եկեղեցու Ախալցխայի եպիսկոպոսական թեմի (90 հազար հավատացյալ և 67 եկեղեցի) եւ Տփղիսի արքեպիսկոպոսական թեմի (150 հազար հավատացյալ եւ 177 եկեղեցի) միջոցով: Վերոնշյալ երկու եկեղեցական թեմերը երբեմն միավորվում էին Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմում: 2001թ. հունվարի 6-ին Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդ Գարեգին 2-րդ-ի հայրապետական կոնդակով Ջավախքում հիմնվեց Հայ Առաքելական եկեղեցու Սամցխե-Ջավախքի (Ներառյալ նաեւ Ծալկան եւ հարակից գյուղերը) առաջնորդանիստ փոխանորդությունը: Խորհրդային շրջանում, չնայած հալածանքներին, Ջավախքում աննախադեպ եկեղեցաշինություն սկսվեց: Այս շրջանում կառուցվեցին ավելի քան 100 եկեղեցիներ: Խորհրդային տարիներին մեծ վերելք ապրեց նաեւ կրթա-մշակութային կյանքը:

Ախալքալաքի շրջանում գործում էին 34 ութամյա եւ 8 տարրական հայկական դպրոցներ՝ ընդհանուր 18 հազար 5 հարյուր աշակերտներով, սակայն 1980-ական թվականներին արտագաղթի պատճառով աշակերտների թիվը սկսեց նվազել՝ արդեն 1985 թվականին կազմելով 125 հազար աշակերտ: Ծալկայի շրջանում կային 5 միջնակարգ, 5 ութամյա և 4 տարրական հայկական դպրոցներ՝ 2619 հայ աշակերտներով: Սառնուլի շրջանում կային 3 միջնակարգ և 8-ամյա հայկական դպրոցներ:

Բոլնիսի շրջանում կար 1 միջնակարգ, 1 ութամյա դպրոց: Ահա այսպիսի ծաղկում ապրող կրթամշակութային կյանքով էր ապրում Ջավախքը՝ մինչեւ Վրաստանի անկախության հռչակումը:

Դրանից հետո Վրաստանն անդամակցեց մի շարք միջազգային կազմակերպությունների եւ ստորագրեց մի շարք միջպետական ու ներպետական իրավական ակտեր՝ հայտարարելով երկրում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանվածության մասին: Մասնավորապես 1997թ. Վրաստանն ընդունեց «Չանգվածային լրատվամիջոցների մասին օրենք», ըստ որի արգելվում են ռասսայական, ազգային, կրոնական խտրականության դրսևորումները, մինչդեռ... 2003թ., 2004թ. եւ 2005թ. ընթացքում բազմաթիվ հակահայկական քայլեր իրականացվեցին Վրաստանում հենց կրոնական եւ ազգային պատկանելության հողի վրա, մասնավորապես հայկական մեծաթիվ բնակչությունը ունեցող Ախալցխա եւ Ախալքալաք քաղաքներում տարածվեցին հայերին ֆիզիկական հաշվեհարդարի ենթարկելու մասին հայտարարություններ, ինչը, չնայած մեծ աղմուկին, վրացական իշխանությունների կողմից համապատասխան արձագանք չստացավ: Եվ, հասկանալի է, որ մեղավորներն էլ չպատժվեցին: Վրաստանը ընդունել է նաեւ 1985թ. Օսլոյի հանձնարարականները, որի 14-րդ կետում, մասնավորապես, խոսվում է ազգային փոքրամասնության ներկայացուցչի՝ մայրենի լեզվով վարչական իշխանությունների հետ շփվելու եւ վարչական իշխանություն իրականացնելու իրավունքի մասին «այն շրջաններում եւ վայրերում, որոնցում տվյալ ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց թիվը զգալի է»: Սակայն Վրաստանի իշխանությունները հաշվի չառնելով իրենց իսկ վավերացրած միջազգային իրավական ակտը՝ 2005-2006 թվականներին մաքսային, դատական եւ վարչական իշխանություններում իրականացրեցին կադրային ջարդ՝ աշխատանքից ազատելով գրեթե բոլոր հայերին՝ վրացերեն չիմանալու պատճառով: Նույնը կատարվում է նաեւ կրթության ոլորտում:

Ըստ Վրաստանի Հանրապետության 1997թ. ընդունած «Կրթության մասին օրենքի» եւ ազգային փոքրամասնությունների կրթության իրավունքի վերաբերյալ 1996թ. ընդունված՝ «Միջազգային փաստաթղթերի ոգին» անունը կրող Հասագայի հանձնարարականների՝ ազգային փոքրամասնությունները իրենց ուրույնությունը պահպանելու համար ունեն «կրթական գործընթացում մայրենի լեզվի պատշաճ ինացության» իրավունք, որը ոչ միայն պիտի «հանդուրժվի», այլեւ պիտի խրախուսվի տվյալ պետության կողմից: Սակայն, այս ոլորտում եւս Վրաստանը իրականացնում է հակաօրինական քաղաքականություն՝ արգելելով հայկական դպրոցներում հայոց պատմության դասավանդումը եւ պատշաճ պայմաններ չստեղծելով, դեռ ավելին. խոչընդոտելով «հայոց լեզվի» դասավանդումը: Դրա արդյունքում ԽՍՀՄ-ից ստանալով փայլուն կրթական համակարգ՝ 1990-2005թթ. այն հասցրեց աղետալի վիճակի: Վրացական կառավարությունը գրեթե նույն քաղաքականությունն է իրականացնում նաեւ հոգևոր ոլորտում: Անտեսելով «մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրո-

պական հռչակագրի 1-ին կետը, 1995 թվականին Վրաստանի կողմից վավերացված «Ազգային փոքրամասնությունների մասին» շրջանակային հռչակագիրը եւ Վրաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ Վրաստանի իշխանությունները ոտնահարում են ազգային փոքրամասնությունների՝ գլխավորապես հայերի դավանանքի ազատության իրավունքը: Այսպիսով, Վրաստանի անկախացումից ի վեր «վերականգման» պատրվակով վրացականացվել եւ ոչնչացվել են մոտ երեք տասնյակ եկեղեցիներ՝ այդ թվում. Կուսանանց սբ. Ստեփանոս, Բեթղեմեմի սբ. Աստվածածին, Չորաբաշի սբ. Գեւորգ, Շամքորեցոց Կարմիր Ավետարան, Նորաշենի սբ. Աստվածածին եկեղեցիները, ինչպես նաեւ Սուրամի, Նախշիրգորայի, Շահնապատի, Լիսի, Սղնախի, Թելավի, Վելիսցիսեյի եւ հայկական այլ գյուղերի եկեղեցիները, խոջիվանքի գերեզմանատունը եւ 300-ից ավելի հայալեզու արձանագրություններ: Այս ամենը վկայում է, որ չնայած ընդունած օրենքներին եւ միջազգային իրավական ակտերին, Վրաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ նաեւ Ջավախքի բնիկներ հայերի իրավունքները եւ ազգային արժանապատվությունը պաշտպանված չեն, ինչը իրավունք է տալիս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին՝ սեփական ուրույնությունը եւ հոգեւոր մշակութային ժառանգությունը պահպանելու համար պահանջել ավելի շատ իրավունքներ: Հետևաբար, ջավախահայերի կողմից վերջին շրջանում բարձրացվող ինքնորոշման իրավունքի պահանջը խիստ արդիական է եւ քաղաքական ու իրավական առումով բացարձակապես արդարացված:

### **Մեսխեթի վերաբնակեցման խնդիրը ջավախահայության եւ ՀՀ անվտանգության տեսանկյունից**

1944 թվականին Վրացական ԽՍՀ կառավարության դրդամբ եւ ԽՍՀՄ կառավարության որոշմամբ Վրաստանի մի շարք շրջաններից, այդ թվում՝ նաեւ Ադիգենի եւ Ասպինձայի, որոշ չափով նաև Ախալցխայի վարչական շրջաններից մոտ 120 գյուղերի գրեթե 75 հազար թուրք-մեսխեթ եւ այլ մահմեդական ազգերի ներկայացուցիչներ քստրվեցին միջնասիական ԽՍՀ-ներ: Ձգտելով այդ տարածքներում մեծացնել վրացական տարրի տեսակարար կշիռը՝ վրացական իշխանությունները ձեռնամուխ եղան դատարկված թուրք-մեսխեթական գյուղերը վրացիներով բնակեցնելուն: Արդյունքում 65 գյուղեր ամբողջապես վրացականացվեցին, 5 գյուղերում ներկայումս ապրում են հայեր, քանի որ դրանք զրտնվում են Ախալքալաքի միատարր հայկական բնակչություն ունեցող շրջանում եւ ունեն ծանր սոցիալ-տնտեսական եւ խիստ բնակլիմայական պայմաններ: Վերջին գործոնով էլ պայմանավորված այստեղ վրացիներ չբնակեցվեցին: Մնացած մոտ 50 գյուղերը գրեթե ամբողջապես անմարդաբնակ են:

Այսպիսով Վրաստանը որոշակիորեն լուծեց իր խնդիրը՝ վրացական եկվոր բնակչության շնորհիվ նշյալ տարածքներում վրացիներին արհեստականորեն դարձնելով թվաքանակով երկրորդ բնակչությունը եւ

միաժամանակ հայկական գավառների միջև ստեղծեց բաժանարար՝ վրացական պատնեշ՝ Ասպինձայի վարչական շրջանը բնակեցնելով վրացիներով: Ինչպես տեսանք, թուրք-մեսխեթների լքված գյուղերը հիմնականում բնակեցվեցին վրացիներով: Այսօր Եվրոպական Միության առջև ստանձնելով թուրք-մեսխեթի Կրաստանում վերաբնակեցնելու պարտավորությունը՝ Կրաստանը ձգտում է թուրքական տարրերին հավանական վերադարձի ժամանակ բնակեցնել հայկական միատարր բնակչություն ունեցող Ջավախքում՝ մասնավորապես Ախալքալաքի, Ախալցխայի, Ասպինձայի, մասամբ նաև Ադիգենի շրջաններում: Անկախ քաղաքական հետեւանքներից սա կհանգեցնի առանց դրա էլ խիտ բնակեցված շրջաններում հողի եւ բնակմակերեսի պակասի: Չնայած թուրք-մեսխեթի քաղաքական ղեկավարության այն կարծիքներին, թե այդ շրջանները այսօր ավելի նոսր են բնակեցված, քան 1944 թվականին, բայց ժողովրդագրական պատկերը այլ բան է ցույց տալիս. եթե ըստ 1939թ. մարդահամարի այդ շրջաններում կար 100594 հայ բնակչություն, ապա 2002թ. մարդահամարի տվյալներով բնակչության ընդհանուր թիվը 133300 հայ է (ավելացրած հայկական շրջաններում բնակեցված վրացական բնակչությունը, աջարական աղետներից հետո այստեղ բնակեցված աջարները եւ այլն): Բացի այդ, եթե 1944 թվականին Կրաստանից արքորվեցին 95 հազար մեսխեթ-թուրքեր, ապա նրանց բնական արագ աճի շնորհիվ, այսօր իրենց այսպես կոչված «հայրենիք» վերադառնալուն են սպասում մոտավորապես 600-700 հազար թուրք-մեսխեթ՝ նոտ 350 հազարը ԱՊՀ-ից, մնացյալը նախկին ԽՍՀՄ այլ երկրներից, Արեւելյան Եվրոպայից եւ Թուրքիայից: Սա կտրուկ կփոխի ժողովրդագրական պատկերը Ջավախքում՝ վտանգելով հայ բնակչության ֆիզիկական գոյությունը, առավել էւս եթե հիշենք այս տարրերի կողմից պարբերաբար սանձազերծվող արյունալի բախումները տարբեր երկրներում եւ նրանց ամենաարմատական կազմակերպության «Վաթանի» հնչեցրած «թուրքական ինքնավարության» ստեղծման մասին հայտարարությունները: Եթե մինչեւ ԵՄ անդամակցությունը Կրաստանի իշխանությունները թուրք-մեսխեթի բերաբնակեցման խնդիրը փորձում էին ձգձգել՝ հաշվի առնելով ճգնաժամային իրավիճակը, ապա այսօր այն արագ ծավալվում է՝ պայմանավորված թուրք-մեսխեթի տարբեր կազմակերպությունների, Եվրոպական Միության եւ Թուրքիայի կողմից եկող ճնշումներով:

Ջավախքը թուրք-մեսխեթով բնակեցնելու քաղաքականությունը կտրի շրջանում քաղաքական իրավիճակը, կհանգեցնի պատերազմական իրավիճակների, ինչը կարագացնի երկրամասի հայաթափման գործընթացը: Կստեղծվի թուրքաբնակ գոտի՝ ներառյալ նաև Ջավախքի հարակից Դմանիսի եւ Մառնեուլի ադրբեջանական շրջանները, որը հետո ինքնավարություն ձեռք կբերի, ինչը Հայաստանի Հանրապետությանը հարյուր տոկոսանոց թուրքական շրջափակման մեջ կպահի:



Այսպիսով, թուրք-մեսխերի հնարավոր վերաբնակեցման դեպքում Ջավախքում կկուտակվի բախումային ներուժ, որը ամեն պահի կարող է պայթել: Բնականաբար այս տեսանկյունից հաշվի առնելով ԱՄՆ-ի և Եվրոպայի տնտեսական ու ենթակառուցվածքային շահերը տարածաշրջանում և հանուն այդ շահերի տարածաշրջանում կայունության պահպանման կարևորությունը՝ հնարավոր է «խաղաղարար» ուժերի՝ մասնավորապես ՆԱՏՕ-ակերպ թուրքական զորքերի մուտքը տարածաշրջան: Հաշվի առնելով նաև ռուսական ռազմակայանի «գսպիչ» գործոնի այլևս բացակայությունը՝ դա մեծ խնդիրներ կստեղծի Հայաստանի Հանրապետության համար: Հայաստանը կզրկվի դեպի Ռուսաստան և Եվրոպա տարանցիկ ուղիներից, նավահանգիստներից, ինչը կհանգեցնի տնտեսական ճգնաժամի: Օգտվելով սրանից, ինչպես նաև վերահսկելով տարածաշրջանային և համաշխարհային նշանակության նավթային, գազային և տրանսպորտային ենթակառուցվածքները՝ թրքա-ադրբեջանական դաշինքը կվտանգի Հայաստանի Հանրապետության գոյությունը:

Այս ամենից հետո ակնհայտ է, որ Ջավախքում հայ բնակչության պահպանումը ոչ միայն պատմական և իրավական արդարության պահանջն է, այլև՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության կարեւորագույն երաշխիքը: Առավել ևս եթե հաշվի ենք առնում Վրաստանի քաղաքականությունը Հայաստանի և Թուրքիայի ու Ադրբեջանի հետ:

Մեկ կարելու հավելում էլ. եթե «Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգում» Հայաստանի հետ հարաբերությունների մասին ընդամենը նշվում է ՀՀ հետ առկա տնտեսական համագործակցությունը եւ այն, որ «Վրաստանին հաճելի են մտերիմ հարաբերությունները Հայաստանի Հանրապետության հետ», ապա Ադրբեջանի եւ Թուրքիայի վերաբերյալ նույն անվտանգության հայեցակարգում բոլորովին այլ դիրքորոշում է: 1. «Թուրքիան Վրաստանի կարելու ռազմավարական դաշնակիցն է», որը «մեծ չափով նպաստել է վրացական ռազմական ուժերի հզորացմանը»: 2. «Ադրբեջանի հետ հարաբերությունները վերածվել են ռազմավարական համագործակցության: Համատեղ էներգետիկական, տրանսպորտային հաղորդակցության ծրագրերի իրականացումը կընպաստի տարածաշրջանային անվտանգության կայացմանը: Երկու զըլխավոր էներգետիկական ծրագրերը՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը եւ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը ունեն ոչ միայն տնտեսական նշանակություն: Վրաստանը Ադրբեջանի հետ համագործակցում է նաեւ քաղաքական անվտանգության ոլորտներում»:

Վրաստանի համար առաջին քաղաքական եւ ռազմավարական փաստաթղթին այս փոքրիկ անդրադարձն անգամ բավարար է հասկանալու համար, որ եթե Հայաստանի հետ Վրաստանը ունի միայն տնտեսական ինչ-ինչ հետաքրքրություններ, ապա մեր ախտյաններ Թուրքիան եւ Ադրբեջանը Վրաստանի համար կարելուրագույն ռազմավարական գործընկերներ են: Սա ակներեւաբար նշանակում է, որ վերոնշյալ խընդիրների ծագման դեպքում ՀՀ-ն հայտնվելու է Անկարա-Բաքու-Թբիլիսի առանցքի դեմ միայնակ:

Վերոշարադրյալ փաստագրական նյութերից հստակ է, որ չնայած Վրաստանի եւ Հայաստանի բարձրաստիճան այրերի կողմից մշտապես հնչեցվող «Հայ եւ վրացի ժողովուրդների դարավոր բարեկամության» մասին «զգայացումը» մտքերին, վերջին հարյուրամյակի ընթացքում, Ջավախքի մշտապես առկա խնդրի գոյությամբ, Վրաստանը հակահայկական քաղաքականություն է իրականացնում, որի առաջին «պտուղներն» այսօր Ջավախքում ակնհայտ են:

Ո՞րն է ելքը եւ ի՞նչ հնարավոր զարգացումներ են սպասվում: Այս տեսակետից խիստ արդիական է վերջերս շրջանառվող «Ջավախքի երկրներում» Արցախ, թե Նախիջևան» նշանաբանը: Այսօր իրապես Ջավախքի խնդրի լուծման համար կան երկու տարբերակներ.

**Առաջին**՝ Ջավախքը Միացյալ Ազգերի Կազմակերպության գլխավոր համաժողովի 2200 Ա (21) բանաձեւով ընդունված «քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի առաջին հոդվածի համապատասխան դրույթի համաձայն («բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք եւ այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը եւ ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը») առանց կողմնակի միջամտության իրականացնում է իր ինքրորոշման իրավունքը եւ.



1. Ստանուն է քաղաքական ինքնավարություն Վրաստանի Հանրապետության կազմում:
  2. Ստեղծում է Ջավախքի ինքնիշխան հայկական պետություն:
  3. Միավորվում է որեւէ անկախ պետության՝ օրինակ Հայաստանի կամ, ասեմք, Ռուսաստանի Դաշնության հետ.
- Երկրորդ՝** նոտակա 10-15 տարիների ընթացքում հայաթափվում է, զրկվում է իր պատմական հուշարձաններից եւ մշակութային օջախներից, վերաբնակեցվում է թուրքական եւ վրացական տարրերով եւ, որպես հայկական ինքնուրույն տարածաշրջանային գործոն, վերանում է պատմաքաղաքական ասպարեզից:
- Երրորդ՝** մեզ համար ոչ ցանկալի իրավիճակից խուսափելու ու Ջավախքի հայաթափումը (իմա՝ թուրքացումը) կանխելու համար անհրաժեշտ է.
1. Ջավախքն ընդգրկել համահայկական կրթակա-մշակութային համալիր ծրագրերում.
  2. Համահայկական դրամական ներդրումներով վերականգնել Ջավախքի հայկական դպրոցները եւ ապահովել համապատասխան գույքով:
  3. Վերանորոգել Ջավախքի թանգարանները, թատրոնները, պատկերասրահները, բացել նորերը, աշխուժացնել մշակութային կյանքը:
  4. Ջավախսահայ ուսանողներին մեծ արտոնություններ տալ Հայաստանի Հանրապետության պետական բուհերում, ցուցաբերել դրամական օժանդակություններ, սահմանել կրթաթոշակներ՝ հայրենի եզերք վերադառնալու պայմանով:
  5. Ջավախքում բացել մուր-մանկապարտեզներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, արվեստի եւ մարզական դպրոցներ:
  6. Ջավախքում բացել աշխատատեղեր, ներդրումային գոտիներ, նպաստել տնտեսության զարգացմանը:
  7. Օժանդակել ջավախսահայերին իրենց եկամտի հիմնական աղբյուր համարվող բնամթերքի սպառման գործում:
  8. Ջավախքում բացել Հայաստանի Հանրապետության հատուկ դիվանագիտական ներկայացուցչություն:
  9. Ջավախքում բացել Երեւանի պետական համալսարանի եւ այլ պետական ու մասնավոր բուհերի մասնաճյուղեր:
  10. Ջավախքում բացել Հայ Առաքելական եկեղեցու առանձին թեմ՝ ամենաբարձր հոգեւոր կարգավիճակով:
  11. Հայաստանի Հանրապետության պետական միջոցներով Վրաստանի Հանրապետության հետ միջպետական համաձայնագրերի շրջանակներում վերանորոգել Հայաստանի Հանրապետություն-Ջավախք եւ Ջավախքի ներքին ավտոճանապարհները:
  12. Նյութապես խրախուսել Ջավախքում աշխատանքի անցնող հայ երիտասարդներին:
  13. Վերականգնել եւ տեխնիկապես հագեցնել Ախալքալաքի եւ Ախալցխայի քաղաքային հիվանդանոցները, վերաբացել գյուղական վայրերի բուժկետերը, գյուղերին հատկացնել շտապօգնության մեքենաներ:

14. Ստեղծել «Ջավախք» համահայկական հիմնադրամ՝ բացառապես Ջավախքում առկա սոցիալ-տնտեսական խնդիրները լուծելու համար:

15. Պետական աջակցություն ցուցաբերել Ջավախքում ստեղծվող երիտասարդական, հասարակական, մշակութային եւ այլ կազմակերպություններին:

Վերոնշյալ խնդիրները պիտի լուծվեն հայ-վրացական համաձայնագրերով, միջազգային կազմակերպությունների, դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, հայկական սփյուռքի բարեգործություններով եւ մեծածավալ ներդրումներով: Միայն այս խնդիրները լուծելու պարագայում է հնարավոր պահպանել հայաբնակ Ջավախքը՝ որպես հակակշիռ թուրք տարրերի, եւ խուսափել Հայաստանը հարյուր տոկոսանոց թուրքական շրջափակման մեջ դնելուց: Ինչը ոչ միայն կհարվածի Հայաստանի տնտեսական զարգացմանը, այլեւ կվտանգի Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը: Հետեւաբար, Ջավախքի հարցը Հայաստանի Հանրապետության եւ Հայ Ազգի հետագա արժանապատիվ ու ինքնիշխան գոյության կամ այլ կերպ՝ լինել-չլինելու խնդիրն է:

### **Եզրակացություն**

Ինչպես տեսանք, պատմաքաղաքական տարբեր ժամանակներում եւ տարբեր իրավիճակներում ինչ-ինչ ուժերի հակահայկական քաղաքականության հետեւանքով, պատմական անհիշելի ժամանակներից **Հայկական Բնօրրանի** կազմում գտնվող Գուգարաց աշխարհը կամ, ինչպես առավել հայտնի է, Ջավախք աշխարհը բռնակցվեց ընդամենն այս թվականությունից առաջ 2-րդ դարում պատմության ասպարեզ իջած վրացական պետությանը՝ կտրվելով **Պատմական Հայրենիքից**:

Անհերքելի փաստերը եւ քաղաքական տրամաբանությունը ապացուցում են, որ Ջավախքում ոտնահարված են բնիկ տերերի՝ հայերի ազգային, քաղաքական, կրթա-մշակութային եւ հոգեւոր-դավանանքային իրավունքները, վտանգված է ջավախահայության ապագան: Ուստի ելնելով Ջավախքում հայապահպանման կարևորությունից եւ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խնդիրներից՝ անհրաժեշտ է արդարացի լուծում տալ Ջավախքում առկա խնդիրներին՝ միջազգային իրավական նորմերի, մարդու անօտարելի իրավունքների, Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի Հանրապետության Սահմանադրությունների հիման վրա:

Այսօր ջավախահայերի արդարացի պահանջները լռեցնելու համար հայ (°) գործիչները հայտարարում են, որ Ջավախքի խնդրի արժարժունը կարող է սրել հայ-վրացական հարաբերությունները, ինչը ձեռնդրու է տնտեսական շրջափակման մեջ գտնվող Հայաստանին, քանզի Վրաստանը կարող է իրականացնել կամ մասնակցել տնտեսական ծրրագրերի, որոնք կշրջանցեն Հայաստանը՝ ավելի վատթարացնելով մեր երկրի վիճակը: Եթե ենթատեքստում Կարս-Ախալքալակ-Բաթում կամ Բաքու-Թբիլիսի-Չեյհան ծրագրերն են, ապա դրանք միայն առաջին հայացքից են ձեռնդրու Վրաստանին: Մինչդեռ իրականում, ռազմավարա-

կան առունով, ներկա աշխարհաքաղաքական զարգացումների համապատկերում ընդգծված հակառուսական դիրքորոշման արդյունքում այս ամենը կարող է արդյունավետ գործի դրվել հենց ի վնաս Վրաստանի: Խոսվում է նաև Վրաստանի կողմից սահմանների հնարավոր փակման մասին, որն իսկապես Հայաստանի Հանրապետության տնտեսությանը կարող է լուրջ խնդիրներ բերել, ինչն իր հերթին կարող է հանգեցնել հիմնախնդիրների՝ ամբողջ պետական համակարգի ներսում:

Բայցեւ պիտի հստակ գիտակցենք, որ այդ սահմանների փակումը ներկայումս, հաշվի առնելով Ջավախքի գործոնը, ընդամենը մի քանի օր կարող է տևել: Առավել եւս, որ այդ պարագայում Հայաստանը կարող է օգտվել աջարական տարանցիկ ուղուց, մասնավորապես նավահանգիստներից: Եւ երկրորդ՝ Ռուսաստանն իր հերթին կարող է արգելքներ ստեղծել ռուս-վրացական սահմանի վրա, ինչը համարժեք խնդիրներ կառաջացնի Վրաստանի համար քաղաքական առունով, ուրեմն եւ՝ տնտեսական առունով: Բացի այդ, եթե տվյալ դեպքում սահմանի փակումը կարող է տևել մի քանի օր, ապա Ջավախքի հայաթափման, նույնն է թե վրացականացման կամ թրքացման դեպքում այդ սահմանները կփակվեն առիավետ:

Խոսվում է նաև Ջավախքում հասարակական լարվածության առաջացման դեպքում երրորդ կողմի՝ մասնավորապես ՆԱՏՕ-ի միջանտության մասին: Սակայն այս տեսակետը այնքան էլ իրատեսական չէ, իսկ զարգացման նման հեռանկարը Հայաստանի Հանրապետության համար միանշանակորեն բացասական չէ, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ԱՄՆ-ի եւ ԵՄ համար այս խնդիրը հետաքրքրական է զուտ տարածաշրջանում իրենց ազդեցության ընդլայնման եւ հաղորդուղիների անվտանգության տեսանկյունից: Այսինքն՝ նրանց համար կարևոր է ոչ թե այն, թե որ երկիրը կվերահսկի այդ շրջանները, այլ՝ թե որ երկիրը կարող է ավելի հստակ տալ այդ ուղիների անվտանգության երաշխիքները եւ ապահովել կայունությունը տարածաշրջանում: Ինչ վերաբերում է թուրքական գործոնին, ապա ԱՄՆ-ն թույլ չի տա թուրքական ուժերի թափանցումը Ջավախք, քանզի Թուրքիայի տարածքից Իրաքի վրա ցամաքային հարձակման մերժում ստանալուց հետո, այժմ ԱՄՆ-ն ինքն է ձգտում անմիջական ռազմական ներկայություն ունենալ տարածաշրջանում: Այս համատեքստում բացառվում է «սուրբ տեղը» Թուրքիային զիջելու հավանականությունը, ինչն իր հերթին չի ենթադրում, թե Ջավախքը կհայտնվի աներկյան ռազմական վերահսկողության ներքո. քանզի Ռուսաստանի Դաշնությունը, ելնելով իր տարածաշրջանային շահերից, նման բան թույլ չի տա: Ու եթե այս համապատկերում ենք դիտարկում նաև Վրաստանի արմատական հակառուսական քաղաքական ուղին, ապա պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետությունը աշխարհաքաղաքական առունով, մասնավորապես իբրև ԱՄՆ-ՌԴ շահերը համահարթեցնող, հաշտեցնող պետություն (որը միաժամանակ իր ներքին ուժերով ի վիճակի է պահպանելու տարածաշրջանային կայունությունը եւ համաաշխարհային նշանակության նավթային եւ գազային ենթակառուցվածքների անվտանգությունը), ավելի շահեկան իրավիճա-

կում է, քան Վրաստանը: Այս պարագայում երրորդ ուժի հնարավոր միջամտությունը ուղղված է լինելու ավելի շատ Վրաստանի, քան Հայաստանի դեմ:

Շրջանառության մեջ է դրված նաև դիվանագիտական եւ ռազմական առումով Հայաստանի Հանրապետության համար «երկրորդ ճակատի» բացման վտանգավորության մասին թեզը: Մինչդեռ, Ջավախքի ժողովուրդը միջազգայնորեն ունի՝ իր իրավունքների համար իրավական ճանապարհով պայքարելու իրավունքը, եւ եթե Վրաստանը փորձի հակադրվել ռազմական բիրտ ուժի միջոցով, ապա նա պատերազմ է հայտարարում ոչ միայն հայերին, այլեւ՝ ամբողջ աշխարհի ժողովրդավարական երկրներին: Բայց եթե անգամ նման բան էլ ի վերջո կատարվի, ամեն ինչ չէ, որ Հայաստանի դեմ է: Նկատի ունեմ հետեւյալը. եթե խոսում են այն մասին, որ Արցախի «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» կարգավիճակի պայմաններում Ջավախքի հարցի սրումը կարող է Հայաստանի Հանրապետությանը կանգնեցնել դիվանագիտական եւ ռազմական կրախի առջեւ, ապա պիտի դիտարկվեն նաև Վրաստանի համանման հիմնախնդիրները՝ մասնավորապես աջարական, օսական եւ արխազական գործոնները: Որոնք եւ ռուսական ու, ինչու չէ, նաեւ հայկական կողմը, իրավիճակի նման զարգացման դեպքում, կարող են շատ արագ աշխուժացնել, ինչի դեպքում Վրաստանը կկանգնի ամենաքիչը «չորս ճակատի» առջեւ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ունենալով իրական տնտեսական ռազմական եւ քաղաքական առավելություններ, Հայաստանի Հանրապետությունը ձգտում է իր համար կենսական այս խնդիրը լուծել դիվանագիտական ճանապարհով՝ շահագրգռված լինելով Վրաստանի ներքին կայունությանը, եւ տարածաշրջանում խաղաղության պահպանմանը: Սակայն, այս ամենն ի վերջո կարող է արդյունավետ չլինել, եթե Վրաստանի Հանրապետությունը չփոխի իր քաղաքական ուղին ու հաշվի չառնի ջավախահայության արդարացի պահանջները: Որովհետեւ հենց այդ հաշվի չառնելը կհանգեցնի ջավախահայության հասարակական պայքարի սրմանը, որի դեպքում եթե ոչ Հայաստանը, ապա հայ հանրությունը, կանգնած լինելով Ջավախք-Թբիլիսի հակամարտության փաստի առջեւ, աներկբա սատարելու է ջավախահայությանը: Ինչի հնարավոր բոլոր հետեւանքների համար պատասխանատվությունը ամբողջապես ստանձնելու են Վրաստանի իշխանությունները՝ որպես իրենց վարած հակահայկական ու հակաիրավական քաղաքականության հետեւանք վտանգելով նաեւ էներգակիրների տարանցումը, որի համար էլ հենց Արեւմուտքը «գնահատում» է Վրաստանը:


**Էդգար Հելիեյան**  
***Հայ Արիական Միաբանության «Ռզու պահապաններ»***  
***ուսանողական եւ երիտասարդական կազմակերպության ղեկավար***

*Աշխատությունը գրելիս հեղինակն օգտվել է պատմաբաններ Տիգրան Սահակյանի, Աշոտ Մելքոնյանի աշխատություններից, արխիվային նյութերից, զանգվածային լրատվության միջոցներից ու համացանցից:*

*Էդգար Չելիեյան*

**Ջ Ա Վ Ա Խ Ք Ի Խ Ն Դ Ի Ր Ը**

**Չայ Արիական Միաբանության  
հրատարակություն**



*Խմբագիր՝ Արմենուհի Մելքոնյան*

*Սրբագրումը՝ Ալենուշի  
Չամակարգչային շարվածքը՝ Արմինե Չայյանի*

**Երեւան – 2006թ.**